# ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

## Տ. ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՌՈՇՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՂԵՒՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՈՆԻ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(2 փետրվարի, 2016)

*Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

*«Ում հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից,*
*սաստիկ երկյուղի մեջ են, ամեն հողմից շարժվում են,*
*ամեն խոսքից վրդովվում եւ ամեն բանից դողում...» :*
**Ս. Եղիշե**

Սիրելի՛ Վեհափառ Տեր, Գերաշնո՛րհ Սրբազան Հայրեր, Հոգեշնո՛րհ Հայր Սուրբեր, Արժանապատի՛վ Քահանաներ, բարեպա՛շտ հայորդիներ.

Այս օրերին Հայ Եկեղեցին իր աշխարհասփյուռ Սուրբ խորաններից հիշատակում, պատմում, ոգեկոչում է հայ ժողովրդի պատմության ամենակարեւոր իրադարձություններից մեկը, որ Եղիշեի ոսկեղենիկ խոսքերով բնութագրվում է իբրեւ *«պատերազմ Հայոց՝ պատերազմ վասն հաւատոյ, վասն Հայրենեաց»*:

Երբ ազգային Եկեղեցին, որ հայի հոգու կենդանարար զորությունն է, ոչ միայն սրբադասում, դարեր շարունակ չթուլացող շեշտադրությամբ հիշատակում, այլեւ շարունակում է անձանձիր տոնախմբել իր ժողովրդի պատմության եղելություններից մեկը, նշանակում է՝ կատարվածը կարեւորագույն խորհուրդ ունի, առնչվում է ազգի գոյության բուն էությանը, նրա

սրտին, ինքնությանը, դրանով նախանշվում է տվյալ տեսակի լինել-չլինելու շավիղը, ապրելու եւ մեռնելու ճանապարհը, կյանքի ու մահվան ուղին:

Երբ ազգային Եկեղեցին, իր մտքի եւ հոգու մեջ ծրարած *Ավարայրի ոգին*, ո՛չ թե մեկ, այլ երկո՛ւ տոնների միջոցով, անընդմիջաբար եւ սերնդեսերունդ չինացող պատգամ է հաղորդում իր ուստրերին ու դուստրերին, ապա պատվիրում խոսել այդ մասին՝ աստվածաշնչյան խոսքերով ասած՝ *«թե՛ Եկեղեցում, թե՛ փանը, թե՛ ճանապարհ գնալիս, թե՛ պառկելիս ու թե՛ վեր կենալիս...»* (հմմտ. Բ. Օր. Զ. 6-7), ուրեմն, անհրաժեշտ է ունկնդիր լինել այդ ձայնին, մոտենալ, մերձենալ, հպվել անհատի եւ ազգի համար գերակա այդ գաղափարին: Եւ սա պետք է հասկանալ:

Իսկ այսօր, այս Սուրբ Տաճարում, ուխտով միաբանվածներիս համար օրվա խորհուրդը երիցս կարեւորվում է, երբ ազգիս Հայրապետի ստեղծարար իմաստնությամբ Սրբոց Ղեւոնդյանց քահանայից տոնին զուգակցվում է ձեռնադրության սրբազան խորհուրդը, որին աղոթակից են դառնում Հայաստանի եւ Արցախի քահանայից համորեն դասերը՝ իրենց առաջնորդ Սրբազան Հայրերի հետ միասին:

Յուրաքանչյուր անհատ, ազգ կամ հասարակություն իր գերակա գաղափարն ունի, այս աշխարհում ապրելու իր բանաձեւը: Գարեգին Հովսեփյանցը այն բնութագրում է այսպես. *«Գերակա գաղափարն այն լուսավոր նպատակն է, որին ձգտել է կամենում անհատը, հասարակությունը կամ ազգը: Առանց գերակայի՝ կյանքը մեռելություն, անիմաստ դատարկություն կլիներ... Մեր կյանքն անխորհուրդ կլիներ, մի անլույս լապտեր կդառնար առանց այդ ձգտման»:*

Իսկապես, մեր կյանքն անխորհուրդ կդառնար, մի անհույս լապտեր, եթե Սրբոց Ղեւոնդյանց արյունով օծյալ ոգու կենարար գաղափարականը չդառնար մեր հավաքական՝ ազգային հոգու կենսատու ավյունը:

Պատմության հոլովույթում մեր հայրերի, իսկ այսօր *«մեր հոգիները թուլացած, փկարացած եւ սաստիկ երկյուղած կլինեին եւ ամեն հողմից կշարժվեին եւ ամեն խոսքից կվրդովվեին եւ ամեն բանից կդողային»*, եթե չհասկանայինք, որ մեր անցավոր կյանքից ու մահից հետո զարթնումի եւ վերակենդանացման հույսի իրականությունը կա: Ասել է թե պետք է վախենալ ոչ թե մահի՛ց, այլ՝ թե ինչ է լինում մարդուս հետ մահվանից հետո: Մահը, որ մարդկային կյանքի թերեւս ամենամեծ չարիքն է, դադարում է այդպիսին լինելուց. կյանք մահից հետո՝ հավատքի վկայված երաշխիքով: Մահը ոչ միայն սկիզբ չէ, այլեւ վերջ չէ: Իսկ եթե մահը մի բան է, որ հանդիպում է մեզ մեր կյանքի ո՛չ սկզբում եւ ո՛չ էլ վերջում, ուրեմն մահն

ինքնին վերջավոր է՝ մարդուն շնորհված անմահությանն առերեսվելիս: Մահն ինքնին մահանալու վախ ունի: Մահն ինքնին մահվան ենթակա է: Ուրեմն, *«մահվանից չի վախենում նա, որ գիտի, թե ի՛նչ է մահը, եւ վախենում է նա, որ չգիտի, թե ի՛նչ է մահը»*: Մենք, որ կյանքում մեկ անգամ ենք հանդիպում մահվանն ու թողնում նրան կես ճանապարհին, ըստ էության, հաղթում ենք նրան: Ուրեմն մենք կա՛նք, իսկ մահը չկա՛: Քանզի կա Նա, որ հավիտենապես մեզ հետ է, համաձայն Իր անսուտ խոսքի, թե՝ *«Ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ ..»* (Մատթ. ԻԸ. 21): Նա է *Այբ*-ը եւ *Քե*-ն՝ *Սկիզբն* ու *Վախճանը* (Հայտ. Ա. 10): Քրիստոս է, որ հանուն մարդկության հանդեպ ունեցած սիրո՝ *«մահուամբ զմահ կոխեաց»*:

Սրբոց Ղեւոնդյանց համար ա՛յս հավատն էր եւ այդ հավատը Շնորհողի հանդեպ սերը, որ զորացրեց նրանց՝ տկարացնելով մահվան երկյուղը, զրկեց մահվանն իր զորությունից, իր զարհուրեցնող ներկայությունից, պարզ ու վճիտ պահեց նրանց մտքի տեսողությունը, եւ *«խաւար տգիտութեան նոցա ոչ եղեւ հասու»* (հմմտ. Յովհ. Ա. 5):

Այս հավատն էր եւ այդ հավատը Ներշնչողի նկատմամբ սերը, որ բարբառել էր տալիս քաղցրախոս Եղիշեին. *«Եթե Նա Իր անմահությունը չինայեց, մենք էլ, որ մեր կամքով մահկանացու դարձանք, մեր կամքով էլ կմեռնենք, որպեսզի Քրիստոս հոժարությամբ ընդունի մեզ անմահության մեջ»*:

Այս հավատն էր եւ այդ հավատը Ներշնչողի նկատմամբ սերը, որ կարգախոս ուներ. *«Եթե նույնիսկ անմահ լինեինք, եւ պետք լիներ մեռնել վասն սիրույն Քրիստոսի, արժան էր»*:

Այս հավատն էր եւ այդ հավատը Ներշնչողի նկատմամբ սերը, որ ապրելուց ըղձալի դարձրեց մեռնելը, մահվան դառնությունը քաղցրացրեց իր ներկայության անուշությամբ եւ *«մահկանացուների մահն իբրեւ անմահների մահ»* ընդունվեց:

Այս հավատն էր եւ այդ հավատը Ներշնչողի նկատմամբ կատարյալ սերը, որ ցայսօր եւ հավետ *«մերժում է երկյուղը»* (Ա. Հովհ. Դ. 18), *«ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում»* (Ա. Կորնթ. ԺԳ. 7) եւ դառնում երաշխիք փրկության:

Վեհափա՛ռ Տեր, այս հավատով եւ այդ հավատը Ներշնչողի հանդեպ սիրով է, որ այս նվիրական օրը Ձերդ Սրբության նկատմամբ երախտագետ եւ որդիական սիրով լցվածներս խմբվել ենք Միածնաէջ Սուրբ Եկեղեցում՝ ներկա գտնվելու խորախորհուրդ արարողությանը, հընթացս

որի քահանայական օծման արժանացան մերօրյա ղեւոնդները: Լիահույս ենք, որ *«նրանց հոգիները թափուր չեն երկնավոր առաքինությունից»*, ուստի աներկյուղ են՝ *«ամեն հողմից չեն շարժվում, եւ ամեն խոսքից չեն վրդովվում, ամեն բանից չեն դողում»*, քանզի ինչպես *«նրանց հոգին է մեծ մարմնից, այնպես եւ նրանց մտքի տեսողությունն է մեծ մարմնի տեսողությունից»*: Հավատում ենք, որ նրանց առաջնորդելու է Ղեւոնդյանց Սուրբ Քահանաների մեծաշունչ ոգին եւ «անմոռունչ հեծությամբ» անընդհատ կրթելու է նրանց այն աստվածային իմաստությամբ, ըստ որի՝ *«հոգին է կենդանարար, եւ մարմին ինչ ոչ օգնէ»* (Յովհ. Զ. 64):

Սիրելի՛ նորաօծ քահանաներ, հոգեւո՛ր եղբայրներ, 451-ից ցայսօր աշխարհը շատ չի փոխվել, որովհետեւ անցողիկ աշխարհի իշխանը՝ բանսարկուն, ստի հայրը, չի փոխվել՝ պարզապես դարձել է առավել անընթեռնելի եւ փորձառու: Իսկ սա նշանակում է, որ մենք ձեզ *«ուղարկում ենք աշխարհի՝ որպես գառներ գայլերի մեջ: Այսուհետեւ խորագետ եղեք օձերի պես եւ միամիտ աղավնիների նման: Զգուշացե՛ք մարդկանցից, որովհետեւ պիտի մատնեն ձեզ ատյանների եւ պիտի տանջեն ձեզ իրենց ժողովարաններում .. Իմ պատճառով»* (Մատթ. Ժ. 16-17):

Սիրելի՛ նորաօծ քահանաներ, այսօր Սուրբ Եկեղեցու ճշմարտությանը հակառակ են կյանքի որոշ սկզբունքներ, որոնք ժամանակի ընթացքում աներեւույթ կերպով ներխուժել են մեր կենցաղ, ինչպես այն ժամանակ մագդեզական կրոնն էր ներխուժում Հայաստան՝ ցանկանալով զրկել մեզ Քրիստոսի հավատից:

Այսօրվա նյութապաշտ աշխարհում՝ նրանց համար, *«ում հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից»*, ճշմարտությունը միայն այն է, ինչ իրենց է դուր գալիս, ինչ իրենք են ճշմարտություն համարում: *«Ինքնուրացությունը փոխարինելով ինքնահաստատմամբ, իսկ խոնարհ հնազանդությունը՝ հպարտ կամայականությամբ,* - ինչպես ասում է Իլարիոն արք. Տրոյիցկին, - *այս դատարկախոսներն ու միտք պղտորողները* (հմմտ. Տիտ. Ա. 10) *ամեն ինչի մասին դատում են համարձակ ու ինքնավստահ եւ, որպես կանոն, մեծամ մասամբ չեն հասկանում, թե ինչի մասին են խոսում: Հատկապես սա հստակ երեւում է հավատին եւ Ս. Եկեղեցուն վերաբերող հարցերում: Այսպիսիներն իրենց նյութականի համար միջոցներ են հայթայթում բացառապես մեր Սուրբ Եկեղեցուն եւ իր սպասավորներին փնովելու ճանապարհով: Եկեղեցուն առնչվող ամեն երեւույթի կապակցությամբ արված զրպարտությունը շատերի համար դարձել է պարզապես շահաբեր արհեստ»*: Սակայն ցավալին այս չէ, այլ այն, որ այդ ակն-

«Եթե Նա Իր անմահությունը չխնայեց, մենք էլ, որ մեր կամքով մահկանացու դարձանք, մեր կամքով էլ կմեռնենք, որպեսզի Քրիստոս հոժարությամբ ընդունի մեզ անմահության մեջ» *(Ս. Եղիշե)*

Սիրելի՛ նորաօծ քահանաներ... մենք ձեզ «ուղարկում ենք աշխարհի որպես գառներ գայլերի մեջ: Այսուհետեւ խորագետ եղեք օձերի պես եւ միամիտ աղավնիների նման: Զգուշացեք մարդկանցից, որովհետեւ պիտի մատնեն ձեզ ատյանների եւ պիտի տանջեն ձեզ իրենց ժողովարաններում... Իմ պատճառով» *(Մատթ. Ժ. 16-17)*:

Որք համբարձայք ի կաճառս սերովբէից եւ ի դասս քերովբէից.
բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն անձանց մերոց ո՛վ Սուրբ Ղեւոնդեանք
(Շարական)

Ս. Ղեւոնդյանց քահանայից հիշատակության օրվա առիթով Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Տ. Մկրտիչ եպս. Պողոշյանի, քահանայական շնորհի արժանացած նվիրյալները Վեհափառ Հայրապետի հետ

հայտ կեղծիքին առանց կասկածի հավատում են նույնիսկ նրանք, ովքեր իրենց ճշմարիտ քրիստոնյա են նկատում: Ուրեմն, աշխարհը նույնն է մնացել, պարզապես փոխվել են դեպքերն ու դեմքերը, միջոցներն ու մարտավարական եղանակները: Սա եւս հասկանալ է պետք:

Հա՛յ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու՝ ավագ, կրտսեր քահանա եղբայրներ, որ այսօր միաբանվել եք Սրբոց Ղեւոնդյանց ոգեկոչման այս նվիրական տոնին վերանորոգելու մեր Ուխտը, մեզ շրջապատող այս նույն խաբեպատիր եւ կեղծիքներով լեցուն աշխարհում, *«առանց մեր քաջությանը վախկոտություն խառնելու»*, քայլե՛նք առաջ՝ Քրիստոսից ավանդված եւ Ավարայրից ժառանգություն ստացած հավատի ու արիության ճշմարտության լապտերը ձեռքներիս: *«Վտանգավոր է եղել եւ է մեր ճանապարհը՝ անդունդների եւ ծերպերի վրայով, բայց եղել է միշտ դեպի վեր, որովհետեւ թե՛ մեր Տերը եւ թե՛ մեր նախնիք այդ ճանապարհով են անցել, իսկ այդ ճանապարհը կյանքի եւ փրկության ճանապարհն է մահվան զորության ճիրաններից»* (Գարեգին Հովսեփյանց):

*«Եւ այս ամենից հետո թող բոլորին պարզ լինի, որ մեր հավատի ուխտը ո՛չ թե մարդու հետ է, որ երեխայի նման խաբվենք, այլ Աստծու հետ՝ անպուծանելի կերպով, որն անհնար է քանդել ու հեռանալ. ո՛չ այժմ եւ ո՛չ հետո, ո՛չ հավիտյանս եւ ո՛չ հավիտյաններից հավիտյանս. ամեն»* (Ս. Եղիշե):